Երկրորդ ընթերցում

Կ-650-21.08.2023-ՏՀ-011

Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի *Հայաստանի Հանրապետության* հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 55-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-րդ մաս.

«14. Սույն հոդվածի 13-րդ մասին համապատասխան՝ հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերը դուրս են գրվում էլեկտրոնային եղանակով: Հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերի դուրսգրման *դեպքերը, կարգը և ժամկետները* սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում և 267-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում «ապահովագրական ընկերությունները,» բառերից հետո լրացնել «ապահովագրական գործակալները, ապահովագրական բրոքերները,» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) գյուղատնտեսական արտադրանքի և Կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի ձեռք բերման մասով Օրենսգրքի 150-րդ հոդվածի 13-րդ մասով հարկային գործակալի համար սահմանված պարտավորությունների կատարումից:»:

Հոդված 4. Օրենսգրքի 343-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) չափագրման արդյունքում ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) մնացորդի պակասորդ և (կամ) ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռք բերման

գործարքների փաստաթղթավորման պահանջները չպահպանելու փաստ հայտնաբերելու դեպքում.»:

Հոդված 5. Օրենսգրքի 346-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «մնացորդի պակասորդը,» բառերից հետո լրացնել «ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջների պահպանումը,» բառերը,

2) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված առանձին ապրանքների, այդ թվում՝ օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների և շրջանառության ֆիզիկական ծավալների, իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հարկային մարմին ներկայացված հաշվետվությունների և հաշվարկային փաստաթղթերում կամ հարկային հաշվարկներում արտացոլված տվյալների կամ հսկիչ դրամարկղային մեքենաների կտրոններում (այդ թվում՝ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոններում) կամ հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերում արտացոլված տվյալների կամ հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկներում արտացոլված տվյալների և հարկային մարմին ներկայացված (այդ թվում՝ երրորդ անձից ստացված) տեղեկությունների անհամապատասխանությունները.»,

3) 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) Օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռքբերումը և (կամ) իրացումը չփաստաթղթավորելու ռիսկերին վերաբերող հարկային մարմնի վերլուծության արդյունքները:»,

4) 2-րդ մասի 2-րդ կետում՝

ա. «հարկային տարվա որևէ ամսում իրացման շրջանառության» բառերը փոխարինել «հարկային տարվա որևէ ժամանակահատվածում իրացման շրջանառության կամ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված և (կամ) 13-րդ մասին համապատասխան փաստաթղթերով ձեռք բերված ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) արժեքի (առանց ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարների)» բառերով,

բ. «100» թիվը փոխարինել «24» թվով,

գ. «փաստացի պակասորդը» բառերից հետո լրացնել «և(կամ) ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջների պահպանումը» բառերը,

5) 3-րդ մասում՝

ա. «հարկային տարվա որևէ ամսում իրացման շրջանառության» բառերը փոխարինել «հարկային տարվա որևէ ժամանակահատվածում իրացման շրջանառության կամ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված և (կամ) 13-րդ մասին համապատասխան փաստաթղթերով ձեռք բերված ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) արժեքի (առանց ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարների)» բառերով,

բ. «100» թիվը փոխարինել «24» թվով,

6) 10-րդ մասի 4-րդ կետի՝

ա. «ա» ենթակետում «փաստացի մնացորդների վերաբերյալ արձանագրությունները» բառերից հետո լրացնել «, իսկ դրանց բացակայության դեպքում՝ հարկ վճարողի հաշվապահական հաշվառման տվյալները, իսկ հաշվապահական հաշվառման տվյալների բացակայության դեպքում՝ Օրենսգրքի 350-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմնին տրամադրված կամ հարկային մարմնի կողմից ստացված տվյալները կամ հարկային մարմնի տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա հաշվարկված հարկ վճարողների ապրանքային մնացորդների վերաբերյալ տվյալները» բառերը,

բ. *«բ» ենթակետում* «միակողմանի գնման ակտերը» բառերը փոխարինել «հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերը» բառերով,

7) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-13-րդ մասեր.

«11. Ապրանքների մատակարարման և (կամ) պահպանման վայրերում ապրանքների մնացորդի պակասորդ (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) հայտնաբերելու նպատակով սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված կարգով չափագրումը (ներառյալ՝ գույքագրմամբ ապրանքների փաստացի մնացորդի (քանակագումարային) արձանագրումը, ապրանքների փաստաթղթային մնացորդի (քանակագումարային) որոշումը, պակասորդի մեծության որոշումը) կատարվում է հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից ընտրված ապրանքների գծով: Պակասորդ հայտնաբերելու նպատակով ընտրված ապրանքների գծով չափագրում իրականացնելիս

ապրանքների ընտրությունը կատարվում է ԱՏԳ ԱԱ առնվազն առաջին 4 նիշի մակարդակով: Հարկային մարմնի պաշտոնատար անձը սույն մասով սահմանված կարգով չափագրումը պարտավոր է իրականացնել ընտրված ԱՏԳ ԱԱ առաջին 4 նիշում ներառվող բոլոր ապրանքների գծով: Ընտրված ապրանքների գծով պակասորդի մեծությունը որոշվում է ըստ յուրաքանչյուր ապրանքի՝ ընդունելով ԱՏԳ ԱԱ առաջին 4 նիշին համապատասխանող ապրանքների տեսակավորման արդյունքում տարբեր տեսակների ապրանքային պակասորդների և ավելցուկների տարբերությունները: Սույն մասով սահմանված ապրանքների մնացորդի պակասորդի հայտնաբերման կարգը կիրառվում է նաև համալիր հարկային ստուգումների ընթացքում:

12. Սույն հոդվածի 11-րդ մասում նշված՝ ընտրված ապրանքների ցանկը ուսումնասիրության հանձնարարագրի հետ միասին ներկայացվում է հարկ վճարողին ծանոթացման: Ուսումնասիրության ընթացքում հարկային մարմնի պաշտոնատար անձինք ցանկում չնշված ապրանքների մասով չափագրում իրականացնելու իրավունք չունեն:

13. Չափագրման ընթացքում ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջների պահպանման նկատմամբ ուսումնասիրությունն իրականացվում է սույն հոդվածին համապատասխան: Ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջների պահպանման նկատմամբ սույն հոդվածին համապատասխան իրականացվող ուսումնասիրության կարգը կիրառվում է նաև համալիր հարկային ստուգումների ընթացքում:»:

Հոդված 6. Օրենսգրքի 385-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «թղթային կամ» բառերը:

Հոդված 7. Օրենսգրքի 406-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ԱԱՀ վճարողից» բառերը փոխարինել «հարկ վճարողից» բառերով,

2) 2-րդ մասում՝

ա. 1-ին կետում «մինչև չափագրումը որևէ ամսում» բառերը փոխարինել «մինչև չափագրումն ընկած որևէ ժամանակահատվածում» բառերով,

բ. 2-րդ կետում «մինչև չափագրումը որևէ ամսում» բառերը փոխարինել «մինչև չափագրումն ընկած որևէ ժամանակահատվածում, Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված և (կամ) 13-րդ մասին համապատասխան փաստաթղթերով ձեռք բերված ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և

արտարժույթի) արժեքի (առանց ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարների) և (կամ)» բառերով,

գ. 1-ին և 2-րդ կետերում «100» թիվը փոխարինել «24» թվով:

Հոդված 8. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 406.1-ին հոդված.

«Հոդված 406.1. Ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջները չպահպանելը

1. Շրջանառության հարկ վճարողների մոտ ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների, արտարժույթի, գյուղատնտեսական արտադրանքի և Կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջները չպահպանելու փաստը հարկային մարմնի կողմից իրականացվող համալիր հարկային ստուգման կամ չափագրման ընթացքում արձանագրվելու դեպքում շրջանառության հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ այդ ապրանքների ձեռք բերման գնի (արժեքի) 20 տոկոսի չափով: Սույն մասով սահմանված խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելու դեպքում գանձվում է տուգանք՝ ապրանքների ձեռք բերման գնի (արժեքի) 50 տոկոսի չափով:

2. Սույն հոդվածով սահմանված տուգանքը՝ ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների, արտարժույթի, գյուղատնտեսական արտադրանքի և Կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջները չպահպանելու մասով եկամտային հարկի հաշվարկման (այդ թվում նաև որպես հարկային գործակալ) առումով հանդիսանում է վերջնական հարկային պարտավորություն:

3. Սույն հոդվածով սահմանված տուգանքների կիրառության իմաստով՝ ապրանքի ձեռք բերման գնի (արժեքի) որոշման անհնարինության դեպքում ապրանքի ձեռք բերման գին (արժեք) է համարվում խախտումը հայտնաբերելու եռամսյակում հարկ վճարողի մոտ երկկողմանի հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված նույն ապրանքի վաճառքի (իրացման) միջին կշռված գինը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Օրենսգրքով սահմանված անուղղակի եղանակներով որոշված գինը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 407-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հայտնաբերման դեպքում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ անշարժ գույքը վարձակալության հանձնելու դեպքի,» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում սույն հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետին համապատասխան՝ ձեռնարկատիրական գործունեություն համարվելու դեպքում համապատասխանաբար՝ վարձատուից գանձվում է տուգանք՝ անշարժ գույքի՝ օրենքով սահմանված կարգով գնահատված՝ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 500 հազար դրամը: Սույն մասով սահմանված խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելու դեպքում գանձվում է տուգանք՝ անշարժ գույքի՝ օրենքով սահմանված կարգով գնահատված՝ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ միլիոն դրամը:»,

3) 7-րդ մասի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«Սույն մասի կիրառության իմաստով անշարժ գույքը վարձակալության հանձնելը չի համարվում ձեռնարկատիրական գործունեություն, եթե անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում կամ հարկ վճարողը Օրենսգրքով սահմանված կարգով անշարժ գույքի վարձակալությունից ստացվող եկամուտներից հաշվարկել է եկամտային հարկը կամ անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի վերաբերյալ այդ իրավունքի փաստացի ծագման օրվան հաջորդող 5-օրյա ժամկետում հարկային մարմին է ներկայացվել հայտարարություն: Սույն կետով սահմանված եկամտի ստացման իրավունքի և դրա դադարեցման հայտարարության ձևը և ներկայացման կարգը սահմանում է հարկային մարմինը:

Առանց անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման՝ վարձակալությունից ստացվող եկամուտներից եկամտային հարկը հաշվարկելը կամ անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի վերաբերյալ հարկային մարմին հայտարարություն ներկայացնելը չի կարող հանդիսանալ վարձակալության հանձնված գույքի նկատմամբ որևէ իրավունքի ճանաչման կամ վարձակալության գործարքը վավեր համարելու (ճանաչելու) հիմք:»:

Հոդված 10.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի *դեկտեմբերի* 1-ից, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. Սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի 3-րդ և 8-րդ հոդվածներն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

4. Հարկային տարվա որևէ ամսում իրացման շրջանառության կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքի, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազայի (առանց ակցիզային հարկի) 100 միլիոն դրամի շեմը չգերազանցած՝ շրջանառության հարկ վճարողների մոտ ապրանքների մնացորդի փաստացի պակասորդը պարզելու նպատակով սույն օրենքին համապատասխան չափագրումն իրականացվում է 2025 թվականի հունվարի 1-ից:

5. Այն հարկ վճարողները, որոնք 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի չեն հաշվառել ապրանքների մնացորդները, պարտավոր են 2025 թվականի փետրվարի 1-ի դրությամբ ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի հաշվառել ապրանքների մնացորդները, եթե 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ նախորդ հարկային տարում Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված և (կամ) 13-րդ մասին համապատասխան փաստաթղթերով ձեռք բերված ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) արժեքի (առանց ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարների) կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքի, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազան (առանց ակցիզային հարկի) գերազանցում է 24 միլիոն դրամի շեմը:

6. Այն հարկ վճարողները, որոնք 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասի և (կամ) սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ըստ

մատակարարման և պահպանման առանձին վայրերի չեն հաշվառել ապրանքների մնացորդները, սակայն հետագայում որևէ ամսաթվի դրությամբ հարկային տարվա որևէ ժամանակահատվածում հարկ վճարողի (այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված և (կամ) 13-րդ մասին համապատասխան փաստաթղթերով ձեռք բերված ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) արժեքը (առանց ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարների) կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքը, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազան (առանց ակցիզային հարկի) գերազանցում է 24 միլիոն դրամի շեմը, պարտավոր են գերազանցելու հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 1-ի դրությամբ ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի հաշվառել ապրանքների մնացորդները:

7. Սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցը շրջանառության հարկ վճարողների նկատմամբ կիրառվում է 2025 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ձեռք բերված ապրանքների նկատմամբ:

8. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտը Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է այդ դրույթն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

9. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտը հարկային մարմինը սահմանում է այդ դրույթն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

10. Այն քաղաքացիները, որոնք սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքները չեն ներկայացրել պետական գրանցման, պարտավոր են մինչև սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտն ուժի մեջ մտնելու օրը ներառող ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ը անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքները ներկայացնել պետական գրանցման

կամ հարկային մարմին ներկայացնել անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի ստացման վերաբերյալ հայտարարություն:

~~Առաջին ընթերցում~~
Երկրորդ ընթերցում

Կ-650-21.08.2023-ՏՀ-011/1
Լրամշակված նախագիծ

~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~
~~ՕՐԵՆՔԸ~~
ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության~~ 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 55-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-րդ մաս.

«14. Սույն հոդվածի 13-րդ մասին համապատասխան՝ հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերը դուրս են գրվում էլեկտրոնային եղանակով: Հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերի դուրսգրման ~~դեպքերը և կարգը~~ դեպքերը, կարգը և ժամկետները սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 2. Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում և 267-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետում «ապահովագրական ընկերությունները,» բառերից հետո լրացնել «ապահովագրական գործակալները, ապահովագրական բրոքերները,» բառերը:

Հոդված 3. Օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) գյուղատնտեսական արտադրանքի և Կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի ձեռք բերման մասով Օրենսգրքի 150-րդ հոդվածի 13-րդ մասով հարկային գործակալի համար սահմանված պարտավորությունների կատարումից:»:

Հոդված 4. Օրենսգրքի 343-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) չափագրման արդյունքում ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) մնացորդի պակասորդ և (կամ) ապրանքների

(բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջները չպահպանելու փաստ հայտնաբերելու դեպքում.»:

Հոդված 5. Օրենսգրքի 346-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «մնացորդի պակասորդը,» բառերից հետո լրացնել «ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջների պահպանումը,» բառերը,

2) 1-ին մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված առանձին ապրանքների, այդ թվում՝ օգտակար հանածոների և դրանց արտադրատեսակների և շրջանառության ֆիզիկական ծավալների, իրացման փաստացի գների (այդ թվում՝ միջին) վերաբերյալ հարկային մարմին ներկայացված հաշվետվությունների և հաշվարկային փաստաթղթերում կամ հարկային հաշվարկներում արտացոլված տվյալների կամ հսկիչ դրամարկղային մեքենաների կտրոններում (այդ թվում՝ էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոններում) կամ հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերում արտացոլված տվյալների կամ հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկներում արտացոլված տվյալների և հարկային մարմին ներկայացված (այդ թվում՝ երրորդ անձից ստացված) տեղեկությունների անհամապատասխանությունները.»,

3) 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) Օրենսգրքով սահմանված կարգով ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռքբերումը և (կամ) իրացումը չփաստաթղթավորելու ռիսկերին վերաբերող հարկային մարմնի վերլուծության արդյունքները:»,

4) 2-րդ մասի 2-րդ կետում՝

ա. «հարկային տարվա որևէ ամսում իրացման շրջանառության» բառերը փոխարինել «հարկային տարվա որևէ ժամանակահատվածում իրացման շրջանառության կամ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված և (կամ) 13-րդ մասին համապատասխան փաստաթղթերով ձեռք բերված ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) արժեքի (առանց ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարների)» բառերով,

բ. «100» թիվը փոխարինել «24» թվով,

գ. «փաստացի պակասորդը» բառերից հետո լրացնել «~~, ինչպես նաև~~ և(կամ) ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջների պահպանումը» բառերը,

5) 3-րդ մասում՝

ա. «հարկային տարվա որևէ ամսում իրացման շրջանառության» բառերը փոխարինել «հարկային տարվա որևէ ժամանակահատվածում իրացման շրջանառության կամ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված և (կամ) 13-րդ մասին

համապատասխան փաստաթղթերով ձեռք բերված ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) արժեքի (առանց ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարների)» բառերով,

բ. «100» թիվը փոխարինել «24» թվով,

6) 10-րդ մասի 4-րդ կետի՝

ա. «ա» ենթակետում «փաստացի մնացորդների վերաբերյալ արձանագրությունները» բառերից հետո լրացնել «, իսկ դրանց բացակայության դեպքում՝ հարկ վճարողի հաշվապահական հաշվառման տվյալները, իսկ հաշվապահական հաշվառման տվյալների բացակայության դեպքում՝ Օրենսգրքի 350-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմնին տրամադրված կամ հարկային մարմնի կողմից ստացված տվյալները կամ հարկային մարմնի տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա հաշվարկված հարկ վճարողների ապրանքային մնացորդների վերաբերյալ տվյալները» բառերը,

բ. «բ» ենթակետում ~~«ա» ենթակետում~~ «միակողմանի գնման ակտերը» բառերը փոխարինել «հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերը» բառերով,

7) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-13-րդ մասեր.

«11. Ապրանքների մատակարարման և (կամ) պահպանման վայրերում ապրանքների մնացորդի պակասորդ (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) հայտնաբերելու նպատակով սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված կարգով չափագրումը (ներառյալ՝ գույքագրմամբ ապրանքների փաստացի մնացորդի (քանակագումարային) արձանագրումը, ապրանքների փաստաթղթային մնացորդի (քանակագումարային) որոշումը, պակասորդի մեծության որոշումը) կատարվում է հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից ընտրված ապրանքների գծով: Պակասորդ հայտնաբերելու նպատակով ընտրված ապրանքների գծով չափագրում իրականացնելիս ապրանքների ընտրությունը կատարվում է ԱՏԳ ԱԱ առնվազն առաջին 4 նիշի մակարդակով: Հարկային մարմնի պաշտոնատար անձը սույն մասով սահմանված կարգով չափագրումը պարտավոր է իրականացնել ընտրված ԱՏԳ ԱԱ առաջին 4 նիշում ներառվող բոլոր ապրանքների գծով: Ընտրված ապրանքների գծով պակասորդի մեծությունը որոշվում է ըստ յուրաքանչյուր ապրանքի՝ ընդունելով ԱՏԳ ԱԱ առաջին 4 նիշին համապատասխանող ապրանքների տեսակավորման արդյունքում տարբեր տեսակների ապրանքային պակասորդների և ավելցուկների տարբերությունները: Սույն մասով սահմանված ապրանքների մնացորդի պակասորդի հայտնաբերման կարգը կիրառվում է նաև համալիր հարկային ստուգումների ընթացքում:

12. Սույն հոդվածի 11-րդ մասում նշված՝ ընտրված ապրանքների ցանկը ուսումնասիրության հանձնարարագրի հետ միասին ներկայացվում է հարկ վճարողին ծանոթացման: Ուսումնասիրության ընթացքում հարկային մարմնի պաշտոնատար անձինք ցանկում չնշված ապրանքների մասով չափագրում իրականացնելու իրավունք չունեն:

13. Չափագրման ընթացքում ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջների պահպանման նկատմամբ ուսումնասիրությունն իրականացվում է սույն

հոդվածին համապատասխան: Ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջների պահպանման նկատմամբ սույն հոդվածին համապատասխան իրականացվող ուսումնասիրության կարգը կիրառվում է նաև համալիր հարկային ստուգումների ընթացքում:»:

Հոդված 6. Օրենսգրքի 385-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «թղթային կամ» բառերը:

Հոդված 7. Օրենսգրքի 406-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «ԱԱՀ վճարողից» բառերը փոխարինել «հարկ վճարողից» բառերով,

2) 2-րդ մասում՝

ա. 1-ին կետում «մինչև չափագրումը որևէ ամսում» բառերը փոխարինել «մինչև չափագրումն ընկած որևէ ժամանակահատվածում» բառերով,

բ. 2-րդ կետում «մինչև չափագրումը որևէ ամսում» բառերը փոխարինել «մինչև չափագրումն ընկած որևէ ժամանակահատվածում, Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված և (կամ) 13-րդ մասին համապատասխան փաստաթղթերով ձեռք բերված ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) արժեքի (առանց ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարների) և (կամ)» բառերով,

գ. 1-ին և 2-րդ կետերում «100» թիվը փոխարինել «24» թվով:

Հոդված 8. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 406.1-ին հոդված.

«Հոդված 406.1. Ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջները չպահպանելը

1. Շրջանառության հարկ վճարողների մոտ ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների, արտարժույթի, գյուղատնտեսական արտադրանքի և Կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջները չպահպանելու փաստը հարկային մարմնի կողմից իրականացվող համալիր հարկային ստուգման կամ չափագրման ընթացքում արձանագրվելու դեպքում շրջանառության հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ այդ ապրանքների ձեռք բերման գնի (արժեքի) 20 տոկոսի չափով: Սույն մասով սահմանված խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելու դեպքում գանձվում է տուգանք՝ ապրանքների ձեռք բերման գնի (արժեքի) 50 տոկոսի չափով:

2. Սույն հոդվածով սահմանված տուգանքը՝ ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների, արտարժույթի, գյուղատնտեսական արտադրանքի և Կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջները չպահպանելու մասով եկամտային

հարկի հաշվարկման (այդ թվում նաև որպես հարկային գործակալ) առումով հանդիսանում է վերջնական հարկային պարտավորություն:

3. Սույն հոդվածով սահմանված տուգանքների կիրառության իմաստով՝ ապրանքի ձեռք բերման գնի (արժեքի) որոշման անհնարինության դեպքում ապրանքի ձեռք բերման գին (արժեք) է համարվում խախտումը հայտնաբերելու եռամսյակում հարկ վճարողի մոտ երկկողմանի հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված նույն ապրանքի վաճառքի (իրացման) միջին կշռված գինը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Օրենսգրքով սահմանված անուղղակի եղանակներով որոշված գինը:»:

Հոդված 9. Օրենսգրքի 407-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հայտնաբերման դեպքում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ անշարժ գույքը վարձակալության հանձնելու դեպքի,» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում սույն հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետին համապատասխան՝ ձեռնարկատիրական գործունեություն համարվելու դեպքում համապատասխանաբար՝ վարձատուից գանձվում է տուգանք՝ անշարժ գույքի՝ օրենքով սահմանված կարգով գնահատված՝ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 500 հազար դրամը: Սույն մասով սահմանված խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելու դեպքում գանձվում է տուգանք՝ անշարժ գույքի՝ օրենքով սահմանված կարգով գնահատված՝ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ միլիոն դրամը:»,

3) 7-րդ մասի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«Սույն մասի կիրառության իմաստով անշարժ գույքը վարձակալության հանձնելը չի համարվում ձեռնարկատիրական գործունեություն, եթե անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում կամ հարկ վճարողը Օրենսգրքով սահմանված կարգով անշարժ գույքի վարձակալությունից ստացվող եկամուտներից հաշվարկել է եկամտային հարկը կամ անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի վերաբերյալ այդ իրավունքի փաստացի ծագման օրվան հաջորդող 5-օրյա ժամկետում հարկային մարմին է ներկայացվել հայտարարություն: Սույն կետով սահմանված եկամտի ստացման իրավունքի և դրա դադարեցման հայտարարության ձևը և ներկայացման կարգը սահմանում է հարկային մարմինը:

Առանց անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման՝ վարձակալությունից ստացվող եկամուտներից եկամտային հարկը հաշվարկելը կամ անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի վերաբերյալ հարկային մարմին հայտարարություն ներկայացնելը չի կարող հանդիսանալ վարձակալության

հանձնված գույքի նկատմամբ որևէ իրավունքի ճանաչման կամ վարձակալության գործարքը վավեր համարելու (ճանաչելու) հիմք:»:

Հոդված 10.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի ~~հոկտեմբերի~~ դեկտեմբերի 1-ից, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. Սույն օրենքի 2-րդ և 6-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի 3-րդ և 8-րդ հոդվածներն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

4. Հարկային տարվա որևէ ամսում իրացման շրջանառության կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքի, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազայի (առանց ակցիզային հարկի) 100 միլիոն դրամի շեմը չգերազանցած՝ շրջանառության հարկ վճարողների մոտ ապրանքների մնացորդի փաստացի պակասորդը պարզելու նպատակով սույն օրենքին համապատասխան չափագրումն իրականացվում է 2025 թվականի հունվարի 1-ից:

5. Այն հարկ վճարողները, որոնք 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի չեն հաշվառել ապրանքների մնացորդները, պարտավոր են 2025 թվականի փետրվարի 1-ի դրությամբ ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի հաշվառել ապրանքների մնացորդները, եթե 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ նախորդ հարկային տարում Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված և (կամ) 13-րդ մասին համապատասխան փաստաթղթերով ձեռք բերված ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) արժեքի (առանց ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարների) կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքի, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազան (առանց ակցիզային հարկի) գերազանցում է 24 միլիոն դրամի շեմը:

6. Այն հարկ վճարողները, որոնք 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ Օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասի և (կամ) սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի չեն հաշվառել ապրանքների մնացորդները, սակայն հետագայում որևէ ամսաթվի դրությամբ հարկային տարվա որևէ ժամանակահատվածում հարկ վճարողի (այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված և (կամ) 13-րդ մասին համապատասխան փաստաթղթերով ձեռք բերված ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների և արտարժույթի) արժեքը (առանց ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի

գումարների) կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքը, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազան (առանց ակցիզային հարկի) գերազանցում է 24 միլիոն դրամի շեմը, պարտավոր են գերազանցելու հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 1-ի դրությամբ ըստ մատակարարման և պահպանման առանձին վայրերի հաշվառել ապրանքների մնացորդները:

7. Սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցը շրջանառության հարկ վճարողների նկատմամբ կիրառվում է 2025 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ձեռք բերված ապրանքների նկատմամբ:

8. Սույն օրենքի 1-ին հոդվածով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտը Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է այդ դրույթն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

9. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտը հարկային մարմինը սահմանում է այդ դրույթն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

10. Այն քաղաքացիները, որոնք սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքները չեն ներկայացրել պետական գրանցման, պարտավոր են մինչև սույն օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանվող դրույթների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտն ուժի մեջ մտնելու օրը ներառող ամսվան հաջորդող երկրորդ ամսվա 1-ը անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքները ներկայացնել պետական գրանցման կամ հարկային մարմին ներկայացնել անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի ստացման վերաբերյալ հայտարարություն:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-650-21.08.2023-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջար-կությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի («Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:») պահպանման նպատակով առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի» բառերը փոխարինել «2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապե-տության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի» բառերը փոխարինվել են «2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապե-տության հարկային օրենսգրքի» բառերով:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1**	Հաշվի առնելով այն, որ նախագծի ընդունման արդյունքում անհրաժեշտ են մեծ ծավալով ծրագրային աշխատանքներ,	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածում «դեպքերը և կարգը»	Ընդունվել է:

			որոնք կարող ենք շատ ժամանակ պահանջել, առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում «դեպքերը և կարգը» բառերը փոխարինել «դեպքերը, կարգը և ժամկետները» բառերով՝ հնարավորություն տալով ՀՀ կառավարությանը սահմանել ժամկետներ՝ հաշվարկային փաստաթուղթ չհամարվող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմված այլ փաստաթղթերի՝ էլեկտրոնային եղանակով դուրսգրումը կարգավորելու համար:	բառերը փոխարինել «դեպքերը, կարգը և ժամկետները» բառերով:	
3.	ՀՀ կառավարություն	**5-րդ հոդվածի 4-րդ կետի «գ» պարբերություն**	Սահմանվող կարգավորումը ավելի հստակ սահմանելու նպատակով առաջարկվում է «, ինչպես նաև» բառերը փոխարինել «և(կամ)» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածի **4-րդ կետի «գ» պարբերությունում** «, ինչպես նաև» բառերը փոխարինել «և(կամ)» բառերով:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	**5-րդ հոդվածի 6-րդ կետի «բ» պարբերություն**	Տեխնիկական վրիպակի շտկման նպատակով՝ առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ կետի «բ» պարբերությունում «ա» ենթակետում» բառերը փոխարինել «բ» ենթակետում» բառերով:	Ընդունվել է: Նախագծի 5-րդ հոդվածի 6-րդ կետի «բ» պարբերությունում «ա» ենթակետում» բառերը փոխարինվել են «բ» ենթակետում» բառերով:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	**Հոդված 10, 1-ին մաս**	Հաշվի առնելով այն, որ նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետն արդեն անցել է, առաջարկվում է նույն մասում «հոկտեմբերի» բառը փոխարինել «դեկտեմբերի» բառով:	Ընդունվել է: Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասում «հոկտեմբերի» բառը փոխարինվել է «դեկտեմբերի» բառով:	Ընդունվել է: